

ածել, ինչպէս պէտք է առանց նրան. սորա զիջեցիկ պատճառով անիրազօրծելի կը մնայ. ի հարկ է, ամենքը չեն կարող ուղղակի Ռուսներէն կարգալ և նրանից օգուտ քաղել:

Ը.

Պ. Տէր — Ղևոնդեանցի «Մայրենի Լեզուն», Ուշինսկու «Մայրենի Լեզուի», թարգմանութիւնն է, թէ և թարգմանիչը և պ. Ս. Պ. (իւր յօդուածում) մի միայն «Լեռնեղութիւն», են ասում, իւր թէ մի քանի զուտ ուսանկան բաները բաց թողնելով և նրանց տեղը զուտ հայկական գնելով թարգմանութիւնը թարգմանութիւն չէ մընում, այլ լսկ հետեւողութիւն է դառնում. չըզիտներ, էլ ուրիշ ի՞նչ կերպ կարող էր անել մէկ ուրիշ անձն, և նրա աշխատութիւնը էլ որն էր լինելու: Դասագիրք շինելու դժուարութիւնը մի քանի բառեր կամ յօդուածներ աւելի կամ պակաս գնելը չէ, այլ ծնանելը այն ոճը, եղանակը, պլանը, որով հեղինակը կամենում է մի որոշեալ նպատակին հասնել: Ուշինսկու հիմնադիր կարգով դասաւորած նիւթերը ձեռաց պատրաստի ունենալով այնքան էլ շատ դժուար չէր մէկ դասագիրք հրատարակել, ու պէտք էր հանրամարդկային տեղեկութիւնները առանց տեղափոխութեան և այլայլելու նրանից վեր առնել, որ ստրկական նմանողութիւն չէ, այլ խոհեմութիւն. որովհետեւ Ուշինսկու պէս մանկավարժ մենք չունինք և շուտով էլ չենք կարող ունենալ:

Պ. Ն. Տէր — Ղևոնդեանցի «Մայրենի Լեզուի», ընթերցարանի իւրաքանչիւր №-ի սկզբում զետեղուած բառերի դասաւորութեան մէջ տեղափոխութիւններ է այս ինքն բառերը յետ ու առաջ դրել կամ երբեմն բաց թողել: Ի հարկէ, մեզ անպէտք համարւած կամ դժուարաթարգմանելի բառերը պէտք էր բաց թողնել և ընդհակառակը բնագործ չըգտնուած ու մեզ հարկաւոր բառերը ներս մտցնել. մեր խօսքը դրան վերայ չէ. մենք միայն ասում ենք, թէ ինչ որ թարգմանել է, պիտի առանց տեղափոխութեան թարգմանուէր, որ կարելի լինէր թարգմանութիւնը բնագործին հետ բաղդատել, եթէ զիցուք թէ, մէկը կամենար: Պատահում է, որ ուսանողն իմացող աշակերտներ ցանկանում են իրանք քննել, տեսնել, թէ որ բառը որպէս է թարգմանած (կամ ընդ հակառակն՝ հայերէն իմացողներ...), բայց այդ ասած տեղափոխութեան պատճառով չեն կարողանում: Բաց ի նորանից՝ պ. թարգմանիչը բաց է թողել մի քանի յօդուածներ, որոնք հեռութեամբ կարելի էր թարգմանել և որոնք երեխաներին խիստ դուրեկան պիտի լինէին. բայց թէ

ինչու. — չըզիտներ: Եթէ ուսաց կեանքից առած լինելուն պատճառով է խորհուրդ չունի, որովհետեւ մի և նոյն կեանքից առած ուրիշ յօդուածներ էլ թարգմանել է, ու սրանք քան նրանց վատ չէին երեւելու երեխանց աչքում: Իսկ եթէ երկարութիւնից կամ զրբոյրը մեծացնելուց խորելու համար — դարձեալ անխորհուրդ, որովհետեւ այս Մայրենի Լեզուն, առաջին տարվայ համար նշանակուած լինելով՝ կարելի է ասել, որ շատ կարճ է և քիչ նիւթեր է պարունակում ընթերցանութեան համար. ու եթէ այս յօդուածներն աւելի շատ յօդուածներ էլ մտցրած լինէին՝ դարձեալ մի տարվայ պաշար չէին տալու: Ամենօրեայ իրական փորձերը ցոյց են տալիս, թէ մի տարում որքան կարող են անցնել հնչական ոճով սկսած երեխայքը:

Ուշինսկու գիրքը, որից թարգմանել է պ. Տէր — Ղևոնդեանցը, յայտնի բան է, մշակած գործ է ուրեմն այն բոլոր բաները, որոնք առանց լեզու խեղաթիւրկելու կարելի էր հայերէն չինել, պէտք է թարգմանուէին հարադասութեամբ և առանց միտքը փոփոխելու. բայց այնպիսի դարձուածները և միտք յայտնելու ձևերը, որք սեպհական են ուսման, ի հարկէ, անպատճառ պիտի հայանային: Մայրենի Լեզուին մէջ տեղեր և մտքեր կան, որոնք այլայլուած են, իսկ կարող էին հարադասութեամբ թարգմանուած լինել. այս ևս, մեր կարծիքով նպատակ չունի:

Թ.

Ըստ ընդհանուր նկատողութիւններից յետոյ մենք սկսում ենք Մայրենի Լեզուի իւրաքանչիւր №-ը առանձնապէս աչքից անցկացնել, և փոքր ի շատէ մատնացոյց լինել թերութիւններին, որոնք մեր կարծիքով, կան նորանում:

(Շարունակել)

Ս Խ Ա Լ

Ամսագրոյս 273 ըզ երեսում դրուած Գեղարդի-Լեւոն Շիրակայ (շարունակութիւն) վերնագիրը սխալմամբ և կրկին եղեալ է յերեսն 277: